**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ**
**(AMICUS CURIAE) № 12/19**

11.06.2019թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը **(այսուհետ՝ Կենտրոն)՝** քննարկելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

ՀՀ վարչական դատարանը (նախագահող դատավոր՝ Գևորգ Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 2019 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դատարանի դիրքորոշմամբ՝ դատարանում քննվող թիվ ՎԴ/10317/05/18 վարչական գործով կիրառման ենթակա «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը կասկած է հարուցում:

Վիճարկվող դրույթի բովանդակության կապակցությամբ Դատարանը նշում է, որ այն պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի, որոնցից մեկով զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը որոշելու համար սահմանված է ժամկետ (հինգ տարի), իսկ մյուսով նման ժամկետ ընդհանրապես սահմանված չէ:

Քննարկվող դրույթի առաջին և երկրորդ մասերի վերլուծությունից հետևում է, որ առաջին մասը կիրառելի է, երբ համապատասխան իրավասու մարմինը զինվորական ծառայության ընթացքում կամ ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ 5 տարվա ընթացքում, որոշում է զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը, որը պետք է առաջացած լինի հիվանդության, խեղման, վնասվածքի հետևանքով (հաշմանդամության առաջացման հիմք), իսկ երկրորդ մասը կիրառելի է, երբ զինծառայողի հաշմանդամության առաջացման պատճառը կապված է զինվորական ծառայության ժամանակ՝ մինչև դրանից սահմանված կարգով արձակվելը

ստացած վնասվածքի հետ, որի դեպքում որևէ ժամկետ սահմանված չէ: Ընդ որում, երկրորդ մասում ներառված հաշմանդամության առաջացման պատճառը վնասվածքի հետ կապված լինելու պայմանը ներառված է նաև առաջին մասում (ըստ էության կրկնում է այն, սակայն երկրորդ դեպքում նույն պայմանի համար սահմանված է ժամկետային տարբերություն):

Այսինքն՝ ըստ Դատարանի՝ երկու դեպքում էլ իրավական հարաբերությունը վերաբերում է զինվորական ծառայության ընթացքի ու հաշմանդամության միջև առաջացած պատճառական կապին, և այդ առումով երկու մասերում առկա ձևակերպումների տարբերությունը չի կարող փոխել դրանց բովանդակությունը, իսկ դա էլ նշանակում է, որ հաշմանդամության հիմքը (առաջին դեպքում՝ հիվանդությունը, խեղումը, վնասվածքը, երկրորդ դեպքում՝ միայն վնասվածքը) պետք է ծագած լինի հենց զինվորական ծառայության ընթացքում և պայմանավորված լինի դրանով, սակայն երկրորդ դեպքում բարենպաստ պայման է ստեղծվել միայն այն անձանց համար, որոնք նույն զինվորական ծառայության ընթացքում ստացել են վնասվածք, որը իր հերթին, ներառված է նաև առաջին մասում:

Վերոնշյալի կապակցությամբ Դատարանը նշել է, որ զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը սահմանվել է հիվանդության հիմքով, այլ ոչ թե խեղման կամ վնասվածքի, և գործող կանոնակարգմամբ, եթե հայցվորի մոտ հիվանդության փոխարեն լիներ վնասվածք, ապա ստացվում է, որ նրան առանց որևէ խոչընդոտի կնշանակվեր զինվարական կենսաթոշակ, որպիսի օրինակը ևս ցույց է տալիս, որ երկրորդ մասում ներառվել է առաջին մասի մի պայմանը (վնասվածքը): Սակայն Դատարանի գնահատմամբ առկա չէ որևէ իրավաչափ օրենսդրական հիմք, որով հնարավոր է վնասվածքը մարդու առողջության համար դիտել առավել վտանգավոր, քան հիվանդությունը և խեղումը, քանի որ նման վտանգավորությունը դասակարգվում է ոչ թե հաշմանդամության առաջացման հիմքով (հիվանդություն, խեղում կամ վնասվածք), այլ միայն հաշմանդամության կարգով (ըստ անձի կենսագործունեության սահմանափակման):

Հետևաբար Դատարանը գտել է, որ միայն հաշմանադամության առաջացման հիմքով անձանց խմբերի տարանջատումը չի կարող հետապնդել որևէ իրավաչափ նպատակ, քանի որ դա նրանց կենսագործունեության սահմանափակման որոշման օրենսդրական ցուցիչը չէ, այլ նման ցուցիչ է հանդիսանում հաշմանդամության խումբը, որպիսի հանգամանքն էլ վիճարկվող դրույթով որևէ կերպ հաշվի չի առնվել՝ դրանով անձանց նույնացման խմբերի համար, պայմանավորված նրանց հաշմանդամության առաջացման հիմքով (հիվանդություն, խեղում, վնասվածք), ստեղծելով խտրական իրավական վիճակ և սահմանափակելով հավասար պայմաններում գտնվող այլ անձանց

կենսաթոշակի համաչափ կենսաթոշակ ստանալու իրավունքը, ինչն արգելված է սահմանադրական նորմերի ուժով:

Վերոգրյալից ելնելով՝ Դատարանը գտել է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 29-րդ և 83-րդ հոդվածներին:

Նշված գործով ՀՀ սահմանդրական դատարանում նիստը նշանակված է 2019 թվականի հունիսի 18-ին:

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն սահմանադրական վեճի առարկան կազմող խնդրին առնչվող իրավակարգավորման, մասնավորապես՝ **«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝**

*1. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված զինծառայողին, եթե իրավասու պետական մարմինը զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, սահմանել է (որոշել է) զինվորական ծառայության հետ հաշմանդամության (հիվանդության, խեղման, վնասվածքի) պատճառական կապ: Եթե զինծառայողի հաշմանդամության առաջացման պատճառը կապված է զինվորական ծառայության ժամանակ՝ մինչև զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելն ստացած վնասվածքի հետ, ապա զինծառայողին հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է անկախ հաշմանդամության պատճառական կապը սահմանելու (որոշելու) ժամկետից:*

Վերը նշված հոդվածի 1-ին նախադասությունից հետևում է, որ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու համար սահմանված են հետևյալ պայմանները.

- բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից **զինծառայողին հաշմանդամ ճանաչելը,**
- բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից **զինվորական ծառայության ընթացքում** կամ զինվորական ծառայությունից սահմանված կարգով **արձակվելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում** զինվորական ծառայության հետ հաշմանդամության **(հիվանդության, խեղման, վնասվածքի) պատճառական կապ սահմանելը:**

Վիճարկվող հոդվածի երկրորդ նախադասությունը հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու համար սահմանում է 1-ից տարբերվող հետևյալ պայմանները.

- բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից **զինծառայողին հաշմանդամ ճանաչելը,**
- զինծառայողի հաշմանդամության առաջացման պատճառի կապը զինվորական ծառայության ժամանակ՝ մինչև զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելն ստացած վնասվածքի հետ՝ անկախ **անկախ հաշմանդամության պատճառական կապը սահմանելու (որոշելու) ժամկետից:**

Այսպիսով, վիճարկվող դրույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու հարցի լուծման համար կարևոր նշանակություն ունի **հաշմանդամության առաջացման պատճառը՝ հիվանդություն, խեղում կամ վնասվածք:** Ընդ որում, եթե հաշմանդամության պատճառը զինծառայության հետ կապված **հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքն է,** ապա այդ դեպքում կենսաթոշակը նշանակվում է այդ պատճառական կապը զինծառայության ընթացքում կամ արձակվելուց հետո հինգ տարվա ընթացքում իրավասու պետական մարմնի կողմից որոշվելու դեպքում:

Իսկ եթե հաշմանդամության պատճառը զինծառայության հետ կապված **վնասվածքն է,** ապա այդ դեպքում կենսաթոշակը նշանակվում է անկախ զինծառայության և վնասվածքի միջև պատճառական կապը որոշելու ժամկետից:

Նախ, նշված հոդվածի երկու մասերի միջև ինքնին առկա է հակասություն, ինչն առաջին հերթին հակասում է **իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին:** Բանն այն է, որ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու համար հաշմանդամության առաջացման պատճառներից մեկի՝ **վնասվածքի** դեպքում քննարկվող դրույթի առաջին նախադասության մեջ սահմանված է զինծառայությունից հետո 5-ամյա ժամկետ՝ վնասվածքի և զինծառայության միջև պատճառական կապի որոշման համար, իսկ նույն դրույթի երկրորդ նախադասության մեջ հաշմանդամության նույն պատճառի՝ վնասվածքի և զինծառայության միջև պատճառական կապի որոշման ժամկետ չի սահմանվում հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու համար: Արդյունքում հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու համար հիմք հանդիսացող հաշմանդամության միևնույն պատճառի՝ **վնասվածքի** և զինծառայության միջև պատճառական կապի որոշման համար սահմանված են երկու տարբեր՝ իրար հակասող ժամկետներ՝ հինգամյա և անժամկետ, ինչի պարագայում անկանխատեսելի է դառնում անձի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքի իրացման հնարավորությունը, ընթացակարգն ու ժամկետային կարգավորումը:

Մինչդեռ, ըստ իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի՝ *Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ (ՀՀ Սահմանադրություն, հոդված 79):*

ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:[1]

***«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը:*** *Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է* ***անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:*** *Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ».*[2]

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-997 որոշման մեջ նշել է՝ *2004թ. դեկտեմբերի 21-ի՝ Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Busuioc v. Moldova) վճռում, մասնավորապես, Եվրոպական դատարանը գտավ, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև*

---

[1] Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

[2] ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

*օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ* ***անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի*** *խնդիր է: Միաժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ զրպարտությանն առնչվող օրենքները՝ պատվի և արժանապատվության իրենց շեշտադրմամբ,* ***անխուսափելիորեն ներառում են անորոշության որոշակի աստիճան:*** *Այնուամենայնիվ, դա չի զրկում նրանց իրենց «իրավական բնույթից»՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի նպատակների համար: Ներպետական մարմինների խնդիրն է կիրառել և մեկնաբանել ներպետական օրենքները:*

Այսպիսով, վիճարկվող դրույթում միևնույն հիմքով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու համար երկու տարբեր ժամկետային կարգավորումներ նախատեսելը, Կենտրոնի կարծիքով, հակասում է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, քանի որ անձի համար անկանխատեսելի է դառնում կենսաթոշակ ստանալու իր իրավաչափ ակնկալիքը:

Մյուս կողմից, բացի իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին հակասելուց, վիճարկվող դրույթը խնդրահարույց է նաև խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսանկյունից:

Այսպես, համաձայն ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի **(Խտրականության արգելքը).**

*Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:*

Իր 07. 04. 2015թ. թիվ ՍԴՈ-1224 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. *«. . . սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից /ՍԴՈ-881, 4 մայիսի 2010թ./:*

*Նմանատիպ իրավական դիրքորոշումներ հայտնել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը /տես, մասնավորապես՝ Stec and Others v. the United Kingdom [GC], nos. 65731/01 and 65900/01, § 51, ECHR 2006-VI ¨ Carson and Others v. the United Kingdom [GC], no. 42184/05, ECHR 2010»:*

Վիճարկվող դրույթը հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունքի սահմանման հարցում տարբերակել է երկու խումբ անձանց.

**առաջին խումբ՝** անձինք, որոնց հաշմանդամության պատճառ է հանդիսացել զինվորական ծառայության հետ կապված **հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը,**

**երկրորդ խումբ՝** անձինք, որոնց հաշմանդամության պատճառ է հանդիսացել զինվորական ծառայության հետ կապված **վնասվածքը:**

Ընդ որում, նշված խմբերից յուրաքանչյուրի հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքի իրականացման համար օրենքը սահմանել է որոշակի ժամկետային տարբերություն: Մասնավորապես, առաջին խումբ անձինք հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն այն դեպքում, եթե իրավասու պետական մարմինը զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ **հինգ տարվա ընթացքում,** սահմանել է (որոշել է) զինվորական ծառայության հետ հաշմանդամության (հիվանդության, խեղման, վնասվածքի) պատճառական կապ:

Երկրորդ խումբ անձինք հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն **անկախ զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը սահմանելու (որոշելու) ժամկետից:**

Այսպիսով, օրենսդիրը զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց տարբերակման հիմքում դրել է զինվորական ծառայության հետ կապված հաշմանդամության պատճառի բնույթը՝ հիվանդություն, վնասվածք, թե խեղում՝ ըստ այդ հանգամանքի էլ ժամկետային սահմանափակում նախատեսելով այն անձանց համար, որոնց զինվորական հաշմանդամության պատճառը ոչ թե վնասվածքն է, այլ զինվորական ծառայության հետ կապված հիվանդությունը կամ խեղումը:

Օրենսդիրը, սակայն, չի հիմնավորել, թե ինչ օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով է պայմանավորված այսպիսի տարբերակված մոտեցումը: Ըստ իրավական կարգավորման՝ հիվանդությունը, վնասվածքը և խեղումը առողջության հետ կապված այն բացասական հետևանքներն են, որոնք առաջացել են զինվորական ծառայության հետևանքով և հիմք են հանիսանում հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու համար: Օրենսդիրը չի հիմնավորել, թե ինչով է պայմանավորված, ի տարբերություն վնասվածքի, հիվանդության և խեղման դեպքում հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքի համար ժամկետային սահմանափակում նախատեսելը:

Ավելին, Կենտրոնը գտնում է, որ ողջամիտ չի լինի նաև պնդելը, որ զինվորական ծառայության ընթացքում ստացած վնասվածքն ավելի վտանգավոր է մարդու կյանքի կամ առողջության համար, քան զինվորական ծառայությայն հետ կապված հիվանդություն ձեռք բերելը: Ուստի, զինծառայության ընթացքում վնասվածք ստացած և զինվորական ծառայության հետ կապված հիվանդություն ձեռք բերած անձանց միջև հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքի իրականացման հարցում որոշակի տարբերակում դնելը, Կենտրոնի կարծիքով, խտրականության արգելքի սկզբունքի խախտում է, ինչն էլ իր հերթին հանգեցնում է սոցիալական ապահովության իրավունքի խախտան:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածի **(Սոցիալական ապահովությունը)՝**

*Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:*

Սոցիալական ապահովության իրավունքը սոցիալական պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովելու որոշակի խումբ անձանց կենսապայմանները, որոնք *մայրության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ պատճառներով* զրկված կամ սահմանափակված են ինքնուրույն իրենց կենսապայմաններն ապահովելու հնարավորությունից:

ՀՀ սահմանադրական դատարանը 07. 04. 2015թ. թիվ ՍԴՈ-1224 որոշման մեջ արձանագրել է. *«. . . ցանկացած իրավունքի իրացում պետք է դիտարկել իրավունքների ու պարտականությունների միասնության ժողովրդավարական սկզբունքի տեսանկյունից, համաձայն որի՝ Սահմանադրությամբ և օրենքներով անձանց համար երաշխավորված իրավունքներն ու դրանց համարժեք պարտականությունները ենթադրում են, որ պետությունը միաժամանակ սպանձնում է դրանց իրացումն ապահովելուն կոչված մի շարք պարտականություններ, այդ թվում՝ իրավական, սոցիալական և այլ պայմանների ապահովման բնագավառում: Անձանց, պետության իրավունքներն ու պարտականությունները փոխկապակցված են, միասնական, պայմանավորված՝ հասարակական տվյալ հարաբերության բովանդակությամբ ու առանձնահատկությամբ: Այդպիսի միասնությունն արդյունավետ իրավակարգավորման ոչ միայն պայման է, այլև*

*էական երաշխիք: Տվյալ դեպքում, Սահմանադրության 37-րդ հոդվածով սահմանված սոցիալական ապահովության իրավունքը տվյալ իրավունքն ապահովելու համար պետության պոզիտիվ պարտականությունից զատ տվյալ իրավունքի հասցեատիրոջ համար պարտադիր ենթադրում է նաև համապատասխան պարտականություն, այն է՝ նպատակային սոցիալական վճար վճարելու պարտականություն, որի արդյունքում ձևավորվում է այն գումարը, որը որպես լրացուցիչ կենսաթոշակային գումար տրամադրվելու է սոցիալական ապահովության իրավունքի սուբյեկտին»*:

Վերը նշված հիմնավորումներով՝ վիճարկվող դրույթը խնդրահարույց է նաև անձի սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքին համապատասխանության տեսանկյունից, քանի որ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքի իրականացումը, առանց ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորման, օրենսդիրը պայմանավորում է այն հանգամանքով, թե երբ է որոշվել անձի հաշմանդամության և զինվորական ծառայության միջև պատճառական կապը, և որն է անձի հաշմանդամության պատճառը՝ հիվանդություն, խեղում, թե՞ վնասվածք:

**Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.**

- **«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց է:**

Համակարգող՝ Լյուդվիկ Դավթյան